



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

< 20 > մարտի 2014 թ.
ք.Գավառ

N 149-Ա

ԳՈՌ ՍԱՐԳՍԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Քաղաքացիական ծառայության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 3-րդ մասի „Դ,, կետով և 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի „Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին,, N17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչի (ծածկագիր՝64-2.2-35) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2014 թվականի մարտի 18-ի թիվ 5 որոշումը, եզրակացությունը և Գոռ Ղազարյանի դիմումը՝

հրամայում եմ.

1. Գոռ Ղազարյանին 2014 թվականի մարտի 20-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչի (ծածկագիր՝64-2.2-35) պաշտոնում, 3 ամիս փորձաշրջանով:

2. Աշխատավարձը՝ 134400 /հարյուր երեսունչորս հազար չորսհարյուր/ դրամ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2014թ. մարտի 20-ից:

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ